

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱԽՏՈՍ ԲՈՒՋԱՆԴԱՅՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

(Շար. տե՛ս էջ 248)

23. էջ 35. տող 3. երթեալք ըստ հետ կամաց ... — Ուղղ. գնետ - որպէս յաճախ ի Սուրբ Գրքս կայ:

24. էջ 35. տող 25. վասն այնուրիկ անընտիրք եղեալք ի հպարտութեանն խոտեցան ... — Ուղղ. քանակայտեան? : — Սուրբ Յուսիկ ի տեսչեան տեսեր էր իւր երկու մանկուներն « որք չէին հաճոյ ի պաշտօն Տեառն Աստուծոյ », այսինքն քանակայտեան (էջ 11. տող 3) : Աստ եւս ի վերեւ՝ կը նկարագրէ Պապայ և Աթմանագինեայ վարքը, որք « ճանաչէին ստահակը և անխրատը », և այլն ... Ուրեմն երբ խնդիր եղաւ ի զաւակէ Գրիգորի Նորին պաշտաման յաջորդելու, այսինքն « զլիսաւորութեան քահանայապետութեան » (սեղ), անոնք իբրեւ անպիտանք քահանայութեան համար՝ խոտեցան. ուստի ի հպարտութեանն խոտիլ՝ չի համապատասխաներ ընագրի իմաստին : Մեր ասածի ուղղութիւնը կարելի է տեսնել, էջ 43, տող 16. « Ապա խորհուրդ . . . ակամայ առեալք զճեանադրոյրիսն սարկաւազոյտեան ... զաւանդն հոգեւոր պատուի » ... յորում յայտնապէս կ'երեւի որ սարկաւազութեան աստիճանը բռնադատութեամբ ընդուներ են. իսկ քանակայտեան համար իսպառ անարժան համարուելը են : Նոյնպէս կարելի է համեմատել էջ 47. տող 39. « Եւ զկարգն Աստուծոյ արհամարհեալ այպանէին », և այլն :

25. էջ 36. տող 10. Աշակերտ եղեալ էր սա մեծին ... և զլիսաւոր Եկեղեցաց նահանգին Տարօնոյ : — Ուղղ. եկեղեցաց : կամ պէտք է ընդունիլ որ խօսքը միայն Տարօնոյ նահանգին վրայ է, որոյ եկեղե-

ցիներուն վրայ « վերակացու և զլիսաւոր էր հրամանաւ Լուսաւորչին, որով փոքր ինչ զկնի յաւելու (տող 20) « Եւ ունէր սա զաստիճանն աթոռոյն զլիսաւորութեան Տարօնոյ », ուրեմն Եկեղեցացն՝ եկեղեցեաց լինելու է. — և կամ պէտք է ընդունել « Եկեղեցաց ». բայց այն աստի մի բան պակասում է՝ որ գոգցես այսպէս լինելու էր « ... վերակացու և զլիսաւոր եկեղեցեացն՝ Եկեղեցաց նահանգին և Տարօնոյ »? . ըստ այսմ կը միարանի երկու միտք Ա. Նա ունէր զաստիճանն աթոռոյն զլիսաւորութեան Տարօնոյ, և Բ. Եւ էր « վերակացու և զլիսաւոր Եկեղեցաց նահանգին », որ էր Գրիգորի ձեռական իշխանութիւնը այն կողմի մասի վրայ իբրեւ իշխանութիւն իմն առանձին : Բուզանդ այս քանի տողներու մէջ բանը շատ խնդրէր է. այնպէս որ հաւաստեաւ որ մտքին տալու է առաջնութիւնը՝ ղժուարին է : Վասն զի նոյն տեղոյ մէջ ամէն բան ինքն հաւասարել է՝ աւելով. « այլ վերակացու և հրամատար (իմա հրամանատար) տեսուչ և հոգարարձու ամենայն եկեղեցեացն Հայոց Մեծաց ընդ ամենայն տեղիս » : — Հմտ. դարձեալ էջ 37. տող 39 :

26. էջ 37. տող 14 . . . որ նախ եղ զՏիմուսն եկեղեցւոյ սրբոյ : — Ուղղ. որ : Հերակլի կամ վահագնի մեհնատեղւոյ վերայ է խօսքը, որոյ կործանմանէն զկնի՝ նոյն տեղոյն վրայ սուրբ Գրիգոր առաջին և մայր եկեղեցին կը շինէ :

27. էջ 39. տող 11. Եւ զորս եգիտ... իւրում յարութեան ... — Ուղղ. արքայութեան : — Քրիստոսի քարոզութիւնը կոչեց զմարդիկ ժառանգ լինելու իւր արքայութեան. սասց՝ գնացէք քարոզեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից : Հոս նոյն իմաստով ասած է, և ոչ թէ սպազայ յարութեան յուսով : Բուզանդ իւր միտքը կրկին փոքր ինչ ստորեւ կը յայտնէ (տող 19). « զայն՝ որ եկեալ զձեզ կոչէր ի փրկական շնորհս արքայութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի » :

28. Էջ 39. տող 35... և իւր մերձաւորս արար զձեզ, և խառնեաց զձեզ ի ընտելորս ին կենդանութեան . . . — Ուղղ. ի ընտելորս և խառնեաց զձեզ ի ընտելութեան մ'է որ Քրիստոս իւր աստուածային ընտելորս խառնեց ընդ մարդկային ընտելութեան :

29. Էջ 40. տող 6. Զի պարտ էր ձեզ . . . : Եւ ձեզ անպարտ մոռանալ . . . : — Հասկանալի « Եւ ձեզ չէր պարտ » . — Յիշեցնելով Քրիստոսի երպիտոյի առ մարդիկ . ասում է պէտք չէր մոռանալ այն ուսուցիչներուն՝ որոնք ձեզի ճշմարտութիւն սովորեցրին . . . (անդ. տող 19) :

30. Էջ 40. տող 12. « . . . որք հոգեպէս բանին վարդապետութեան երկնեցին . . . : — Ուղղ. վարդապետութեան :

31. Էջ 40. տող 14. . . . և ըստ ձեռում եղծման . . . : — Ուղղ. զեղծման ?

32. Էջ 40. տող 15. . . . վերստին ընդերայ չարեացն . . . : — Ուղղ. կրկնայ. վասն զի յետոյ իսկ և իսկ կ'ասէ « . . . երկնեցին զձեզ դարձեալ » :

33. Էջ 40. տող 25. Արդ ձեր թողեալ զԱստուած, և յիշեցոցէր զչարիսն . . . : — Ուղղ. յիշեցէր : Ինչպէս է որ ո՛վ թողու զԱստուած, անպատճառ պիտի հետեւի իւր առաջին չարեաց, որ է սանկ յիշել թողածը և մոռացածը . և հոս՝ Քրիստոսի առ Հրէայս ուղղած յանդիմանութեան միտքն է թէ « և դուք ցցեք զչարի հարցն ձերոց » : Այս մտքի լրացումն կու տայ Ռուզանդ, էջ 45. տող 30. « Եւ չար բան զնոսա առ մարդիկ . . . կանխեալք » :

34. Էջ 41. տող 34. Կամ գիւրդը եղէց բարեխօս վասն այնոցիկ որք կրտսնեցին . . . : — Ուղղ. Նրնանեցին : Բոլոր իմաստը բողոքում է այդ ազաւաղած բառի դէմ . շարունակ ընթերցումը և կը տեսնես որ զու ինքը կ'ասես « գիւրդը խօսիցիմ ի հաշտութիւն վասն այնոցիկ՝ ոյք փախուցեալքն են և ոչ կամին դատեալ » :

35. Էջ 42. տող 5. Եւ եղև իբրև զայս ամենայն լուաւ, բորբորեալ ի ընտելորս ին ? — Ուղղ. ի բարկորսին ? Շատ կարելի է որ բորբորի մէկն և անցնի բռնաւարութեան, բայց այդ բորբորումն անշուշտ յառաջ գալու է բարկութենէ : Տես ի ստորեւ տող 13. « առ դատութեան սրտին ցուման, առ զայրուցս բարկութեան » :

36. Էջ 43. տող 22. Որոց ստրկայր զաւանդն հոգեւոր պատուի . . . : — Ուղղ. կամ առ ոտն հարեալք և կամ որոց արհամարհեալք : Մարթ է և ընդունել՝ իբրև ընկեցեալք զաւանդն հոգեւորն պատուի . . . յարուստն զինուորութեան զինեցան :

37. Էջ 46. տող 18. Բայց յայնմ յանմիտ թագաւորութեանն ժամանակի ոչ միայն թշնամիք թշնամեաց, և բարեկամք բարեկամաց : Իմաստն պահանջում է որ թշնամեացէն զկնի յաւելացուի՝ այլ և . վասն զի բազմատեան ձեռն այդպէս ըստ իմաստին լրումն կը ստանայ . ոչ միայն թշնամիք թշնամեաց, այլ և բարեկամք բարեկամաց կը դաւաճանեն և մէկգմէկ կը մատնեն :

38. Էջ 46. տող 38. Յայնմ ժամանակի ի գայրակոյ գտանէին ի դայեակս ւանկունս փախտեաց . . . : — Ուղղելի գաղտագոյր : Պատճառն յայտնի է . Տիրան երկու մեծամեծ տոհմերը՝ Արծրունեաց և Ռշտունեաց՝ սրէ անցրեցել կու տայ . մեր պատմեաց սովորական հնարագիտորսն է դայեակներու ձեռքով ձծկան երեսայր փախցնելով ազատել, ինչպէս գիւրդոր և զՏրդատ, աստ ես ի հանդիսի են դրուած երկու երեսայր՝ Տաճատ Ռշտունի և Շաւապ Արծրունի : Ուրեմն դայեակները փախցնելով՝ ի հարկէ ծածուկ և տեյայտ պիտի պահէին զանոնք, որպէս ի գաղտագոյր գտանէին, զորոնք յետոյ գտնելով « ածին առաջի թագաւորին » : Իսկ զայրակոյ Բնչ միտք ունի ես չհասկացայ : Հմմտ. էջ 116. տող 11. « վասն որոյ անկանէր գաղտագոյրս » :

39. Էջ 48. տող 32. ... և գտանէին զնոսա Լուկ ցամաքեալ զձեզոցիսոյ զոսկերս նոցա ... — Ուղղ. կնոսցա? Պապ և Աթանասիոս իրենց անառակ վարուք բաղդասարեան իննոյք կազմելով եպիսկոպոսանոցի մէջ, զանիելիան հրեշտակն չարաչար կը սատակէ զնոսա: Ամէնքն սարսափահար, մինչև անգամ դուռն բաց թողլով՝ կը փախչին. « Եւ բազում ամիսք անցանէին ի վերայ իրացն », մարմինները « նեխեցան, կողոպտեցան, յաղկեցան, քակեցան լուծան ի միմեանց, ցրուեցան ոսկերք նոցա »: Այս վիճակի մէջ ուրեմն սպիտակ ոսկրոտիք՝ միայն սպիտակ կրի կամ կճի տեսք պիտի ունենային, և ոչ թէ կճակի, որ չգիտեմ ի՞նչ կը նշանակէ: Իսկ եթէ ընդունինք որ հրեշտակ չէր զարկողն, այլ գնտածեւ կայծակ, այն ատեն ոսկրոտեաց կիր դառնալուն բնաւ տարակոյս չի մնար:

40. Էջ 48. տող 37. Բայց Պապայ ի բուն կնոջն ... ի Հացեաց գեղջէ կործապատացն: — Ուղղ. արդեօք նործագատացն? Որովհետեւ Աշտիշատու մեհենատեղիքն սեփականութիւնք էին Վահագնի ցեղին, և Տիգրան Միջին՝ զրկեց գիրեքք քրմական պաշտօնից, կը հետեւի ուրեմն որ նուազեցաւ կամ կարճացաւ նոցա սեփական ազատութիւնն, և ըստ այսմ՝ Պապայ հարձն լինելու էր Վահագնի ցեղիցն ի կարճագատացն: Ս. Կերսեսի վարուց մէջ բարձրուշարքը կը յիշուին նաեւ Աշտիշատեանք (Սոփ. 2): Բայց թագաւորք՝ թո՛ղ զթագուհին՝ պահէին և հարճեր. սոցա ծնունդքն ինչ կոչումն կրնային ունենալ, ինչ ազնուական աստիճան: Հաշտեանք և Ալիովիտ լիքն էին այդ տեսակ ծնունդներով. արդեօք այդ դասակարգն չէ՞ր կոչուիր նարճագատք:

41. Էջ 49. տող 21. ... որ ոչինչ պակաս քան զդեւ էր մոյրորեալք ... — Ուղղ. մոյրորեալք. մուրրութիւն՝ մտքի է, իսկ մուրթիւն՝ կամաց և բարուց. վասն որոյ դեւն մուրի կարէ լինել, զի ինքն է մարմնացած մուրրութիւն. ուստի և Փիսակ

մուրի էր քսութեամբ և ոչ թէ մուրեալ իւր դաւաճան նպատակներու մէջ: Բնաւ մեր ասածին ի գործ ածեր է հեղինակն այդ բառը (էջ 50. տող 5) « ... և պատարագօք ի ձեռն մուրկան Փիսակայն » ... դարձեալ նոյնը կրկնում է (էջ 56. տող 28) « ... ամբոյն խոսվութեան ի մուրկան ատնէն Շապուհվարազայն »:

42. Էջ 50. տող 36: Եւ այնչափ զայւրացոյց ... զի չեւ է հնար գտանել մարթել (հարթել) ճանապարհս ... — Ուղղ. զի որպէս և է՝ հնար գտանել՝ բռնելու Հայոց թագաւորք:

43. Էջ 51. տող 14. Խորհէր արքայն ընդ իւր ծառայան ներքինիսն սպասաւորան իւրում սենեկի: — Ուղղ. Կերքինս. աստ արդեօք հասկանալու է ներքինի՝ թէ ներքին: Կերքինիք յիրաւի ծառայք էին թագաւորի սենեկին, այսինչն կանանոցին. իսկ ներքին ծառայ, հասկանալի է իբր մտերիմ, խորհրդակից, որպէս ներսի մարդ և ոչ դրսեակն:

44. Էջ 51. տող 25. Այլ վարկպարագի արասցուք, ասէ, վասն դառնացոյ չար սպցիկ չարութեան դառնացոյ սպցիկ: Աստ աւելորդ կրկնութիւն կայ, երկուսից մին պիտի ընդունել:

45. Էջ 56. տող 2. Եւ ատին զկապուտ զաւար բանակին, և զկանայս թագաւորին և զԲամբիլի, և զԲուսակուն ընդ նոսին ... — Ուղղելի ... և զԲամբիլին ընդ նոսին, ... « և զԲուսակուն » բոլորովին աւելորդ է. քանզի Հայք ատին բանակը, թագաւորին կանայքն և Բամբիլին ալ անոնց հետ, որ ամենակարեւորն է գերութեան մէջ. ինչք և ստացուածք բոլոր կը տանին « ընդ նմին »: Շապուհ իւր կեանքը կու տար, քան տեսնալ իւր կանանց անարգանքն և գերութիւնն:

46. Էջ 57. տող 6. Ապա գտանէր հրովարտակ ... — Ուղղ. գրիք:

47. Էջ 66. տող 25. ... և յամենայն գործոց Հայոց ի ժամանակս խոյրարեան

Տիրանայ ... — Ուղղ. խորտրեան Տիրան խննթարար կը կոտորէր հայ նախարարները, մի կերպ կատաղի գազան դարձեր էր և յիմարացի էր և ոչ թէ խլացեր. կուրացաւ և ոչ խլացաւ :

48. Էջ 67. տող 6. Նոյնպէս ստրատելութեան սպարապետութեան ... իրափառ, աղանազգիք աղանազորջ արծուէնշշանք վարժնականիջը, աներկիւղը, քաջաւիրտը ... — Ուղղ. իրափառն աղտազգիք, աղտազորջը, արծուէնշանք վարդունիջը, աներկիւղը, և այլն : իրափառն կարէ մնալ, ինչպէս փոքր ստորեւ կ'ասէ « Բարեանուն, իրաքալ » : Ազատագրի լինելը յայտնի է, իսկ ազատազորջը՝ շատ բնական որ իւրագրանշիւր նախարարութիւն իւր տան և տոհմի սեփական դրօշն ունենալու էր, և այդ դրօշի վրայ նկարուած լինելու էին արծուէնշանք. իսկ վարպետնիւք կը համարուի թէ սաղաւարտի կամ զինուց վրայի զինանշանք լինին, որ աներկիւղութեան և քաջասրտութեան նշան էր. ըստ այնմ՝ որ մեր մատենագիրք քաջ զօրավարներու համար կ'ասեն՝ վարազարար յարձակեցաւ թշնամեաց վրայ. Եղիշէ էջ 131. տող 17. « Յայնմ տեղուջ դէտակնի ք վեր ամբառնայր Արշաւիր Արշարունի, գոչէր առիծարար և յարձակէր վարազարար » : Հմմտ. 189. տող 2. « ազատս ազգայինս թ հազար » : Հմմտ. էջ 122. տող 16. « ազատագունդ բանակ » :

49. Էջ 67. տող 17. Եւ այլ յայսմ ազգաց ... գործակալը միայն էին, ինն հարիւր բարձր. — Այս պարբերութեան առաջին մասը խառնակ է. իսկ երկրորդ մասին բարձերութիւն. ինձ թուի Բուզանդ թուարկութեանց ժամանակ՝ միշտ ալ ձեռաց մատները կը փակէ և բանայ (տես Բազմ. Մարտ, 1906) : Այս տեղ ինձ թուի որ նախնական ձեւ լինելու էր « գործակալը միայն էին հարիւր բարձ » : իսկ ընդօրինակող այճը՝ էիւր տեսեր է նաեւ ինն, և կրկներ է, և մի մատի փակելով՝ հարիւրն դարձեր է ինն հարիւր : Ս. Ներսեսի վարուց մէջ յիշուած քարձերն (տես Սո-

փերք), եթէ հատրնտիր առնենք Աւագ և Կրտսեր նախարարութիւնը՝ հազիւ հարիւր բարձ կազմեն. իսկ այլ ցեղապետը և աշխարհաստեարը և գաւառակալը գուցէ իրբեւ դաշնակիցներ կը մասնակցէին թագաւորի տանարի ուրախութեան, և ասոնց թիւն կընար 100—400 և մինչեւ 1000 բարձրանալ : Յամենայն դէպս, եթէ այժմեան վրայ ազգի ազնուականութեան դրութեան միտ ղնելով, եզրակացնենք որ անցեալումն չայերի մէջ զիւրագին մարթ էր ձեռք բերել իշխունական կոչումն (թաւատ, զխապետ), այ՛, այն ատեն կարենք հասկանալ թէ ինչո՞ւ Բուզանդ հարիւրը իննհարիւր կը շինէ : Այդպիսի քառասներ այժմ թիֆլիզում ամէն մի զինեսներում կամ խոհանոցում և կօշկակարի խանթում երկու և երեքը կը գտնես : իսկ պատմական անցեալով յայտնի իշխանական տներ կամ տոհմեր՝ միայն մատի վերայ կարելի է համարել :

50. Էջ 68. տող 19. Սա լեալ էր ամուսնաւոր ... նախ յատիս մանկութեան : — Ուղղ. յատիս մանկութեան : Աստի կարելի է իմանալ որ Հայոց մէջ կար սովորութիւն ամուսնացնելու անչափահաս մանկունք, ինչպէս և այժմ այդ անբնական երեւոյթները կրկնուում են : Թէպէտ Բուզանդ կը լռէ, բայց հաւանական է, որ Ս. Ներսէս ալ բռնադատուած լինի ամուսնանալու, որ ամուսնոյ մահուանէն յետոյ՝ չուզեց կրկին աշխարհ մտնել, այլ « մինչդեռ մանուկ իսկ էր՝ գնայր ... աշարատութեամբ ... որ և շարունակեց մաքուր կեանք « մինչ դեռ ես զինուորական ձեւն յինքեան բերէր » :

51. Էջ 69. տող 12. Մինչդեռ ես ... պատմունանաւ և գարդ վայելուչ : — Ուղղ. ի գարդ վայելուչ :

52. Էջ 70. տող 7. Այլ թոյլ տուք ինձ ... տառապանօք, և մեղօք հանդերձեալ դատաստանին : — Ուղղելի՛ յոսով կամ երկիղի : Տառապանաց հետ իբրեւ մեղաւոր ապաշխարութեամբ պիտի սպասէ

հանդերձեալ դատաստանին: Իսկ եթէ վարձուց հատուցման կը սպասէ այդ օրուան, այն ատեն « յոյժ » կարէ թելադրել նմա « ակն ունել » ընդունելոյ իւր արդար հատուցումն, զոր Տէր հատուցանէ իւր պահած օրը:

53. Էջ 70. տող 27. Բայց յորժամ գհերն ... Ի գեղն անդիկալ՝ զկերպարանն փոխելով: — Ուղղելի աներևայ: Առնես անդիկեմ բայ մ'ունի, որոյ դէմ՝ ափսոսոյ նշանակութիւնը կու տայ: Չգիտեմ այլ մատենագրի մօտ կնիյ այսպիսի բառ և հոմանիշ իմաստով: Սակայն հոս ափսոսութիւն, խղճարտ իմաստով չէ առած, այլ աւերուելու, տգեղանալու նշանակութեամբ: Քանզի երբ կորեցին մագերէ՝ աւերուեցաւ այն « յոյժ գեղեցկութիւնն », որոյ համար բազումը արցունքնին չկրցան բռնել, տեսնելով այն « յոյժ գեղեցկութիւն »ը կերպարանափոխ եղած, « զկերպարանն փոխելով »:

54. Էջ 71. տող 31...: Նա և բազմութիւն եպիսկոպոսաց ... խոնարհել ամենեցուն: — Ուղղ. խորհել: Թագաւորն իւր իշխանները ժողովեր է, Ս. Ներսէս ձեռնադրութեան զրկելու համար, եկեր են նաեւ Հայոց Եպիսկոպոսներ նոյն խնդրոյ համար խորհելու ի միասին:

55. Էջ 72. տող 7. Եւ հաւատարիմ հրովարտակօք կարողիրասաց սա կարողիկոս: — Ուղղելի սա կարողիկոս կարողիկոսաց, որպէս փոքր ինչ ստորեւ (տող 13) ասէ. « և տեսին անդ զԿաթողիկոսն կաթողիկոսաց »...: Որպէս շատ կրկնեցի թէ անվարժ ընդօրինակողն մուծեր է բազում սխալանք, այս մի օրինակն կարէ համոզիչ լինել և վասն այլոցն:

56. Էջ 73. տող 22. Սա և առաւել եւս առաջին ծառոցն նմանեալ, որ զնոյնազգեսց զնոյնանաս պտուղս վարդապետութեան բերեալ ... — Ուղղ. առաջին մակացն ... զնոյնահամ պտուղս ... Մարթի և փոխանակ մշակացն դնել հարցն. մի և նոյն իմաստն ունին: Երբ ընդունինք Ս.

Ներսէս կամ իրրեւ առաջեկոց յաջորդ, կամ իւրոց նախնեաց: Թաղէս և Բարդուղիմէոս քարոզեցին Քրիստոսի վարդապետութիւնը և առին ժողովրդեան քաղցրահամ պտուղներ: Նոյնը արին նաեւ Ս. Գրիգոր և որդիք իւր, որոց կը յաջորդէ Ս. Ներսէս, որ բազմօր պիտի առաւելայր ընն զնոսա: Մեր մտքը ինքը Բուզանդ լաւագոյն կերպով կ'ասէ, և կ'ուղղէ իւր « ծառոց » սխալը, տես էջ 74. տող 7. « Եւ ընդ ամենայն տեղիս ... նորուն հարցն սեմանեալ... Չորոյն անեցոյց մակն հնձող... կարգացն տապիկն հարցն մշակացն փոխաւորդ եղեալ »:

57. Էջ 74. տող 25. Եւ ի դատաստանացն ամենին անշէջ հրոյն ... : — Ուղղ. ասեկին ... ատենան դատաստանի և այլ նման բազում վկայութիւնք ի զրոց՝ ունիմք ի հաստատութիւն:

58. Էջ 75. տող 16... և ի ժողովել զախտածէսս և զօրկունս և զմարմնախորս և զամենայն ցաւոտս: — Ուղղ. մարմնախորս: Այս տեղ այն իմաստը չունի ինչ որ կ'ասէ Ս. Պողոս, որ մարմնովն գնան, որ է վարին, զա բարոյական ախտի կը վերաբերի: Իսկ աստ մարմնով հարուածեալներու համար է խօսքը, պակասաւոր կամ որ և իցէ անբուժելի հիւանդութեամբ վարկուած: Ըստ այսմ՝ նոյն բարը զորձածուած է (էջ 77. տող 15) ... « այլ կաղք և կոյրք և մարմնահարք խոզք և հաշմեալք » ...

59. Էջ 75. տող 23. Ծիկեաց նոյնպէս ... կարգս կանոնաց հայրենիս կարգեր ... զանառակութիւն աշխարհին դնելոյ ... (էջ 76. տող 7): Եւ կանոն ... — Ուղղ. Ծիկականաց նոյնպէս ... կարգս կանոնց աշխեաց կարգէր ... զանառակութիւն աշխարհին դնելոյ ... Եղ կանոն: — Բազում ուղղութեանց մէջ զոր առնէր Ս. Ներսէս քաղաքաց և նախարարական տանց մէջ, չմոռացաւ նաեւ զգիւղացի շինականները, որոնք թամբը տգիտութեամբ մոլորուած էին կրօնական դաւանութեանց մէջ, անոյոյ

և անաստուածը էին: Բնդ նոսին և կոնտեց  
 և այրիներուն եւս մասնաւոր պատուէր  
 տուաւ կոծ, լալ և աշխար չղնել մեռելոց,  
 հաւատարիմ մնալ իրենց ամուսնութեան,  
 « մի՛ ստել, և մի՛ դաւ բերել իւրեանց ա-  
 մուսնութիւնընկալ կողմանց », այսինքն՝  
 ինչպէս այժմու Քրդերը կ'անին. զոր օրի-  
 նակ մի գեղեցիկ կին՝ օր մի յանկարծ կը  
 գնայ մի այլ մարդոյ, և այդ մարդոյ կիւնն  
 կը փախչի միւսի հետ . երբեմն կորի կը  
 ծագի մէջերնին, սակայն իսկոյն դրամա-  
 կան և այլ միջոցներով հասուցուցնի տա-  
 րով իրարու՝ կը հաշտուին և կը պատահի  
 որ ժամանակ մը այսպէս ապրելով՝ յետոյ  
 կրկին կը վերագոծնան իրենց առաջին  
 մարդուն: Բուզանդի խօսքերը անշուշտ  
 այդպիսի սովորութիւն մը կ'ականարկէ նաեւ  
 Հայոց մէջ լինելուն, զոր Ս. Կերսէս յա-  
 տուկ օրէնքներով կամի բառնալ: Կոյնպէս  
 կայ զեռ եւս Քրդերու մէջ սովորութիւն  
 որ իրենց տոհմի գեղեցիկ աղջկունք և այլրի  
 հարսեր կ'ամուսնացնեն մերձաւոր ազգա-  
 կանների հետ, որ նաեւ Բուզանդ կ'ակն-  
 արկէ « փախչիլ աւելի ի մերձաւոր և  
 յազգին տոհմակից խառնակութեան ա-  
 մուսնութենէն, և մանաւանդ ի մերձաւո-  
 րական ի նուոց, և որ զամ մի այսմ նման  
 լեալ էր ինչ »: Անդ, տող 8—9:

60. Էջ 77. տող 29. Էւ սոյնպէս տա-  
 յաւ հցոյց զԱռաքեալսն յուշ առնելով, որ  
 պաշտօն աղքատաց ... — Ուղղ. տարտ-  
 ցոյց թէ տառապիւոց ... որ ի պաշտօն ...  
 Դժուարիմ ճշգրիտ որոշել երկու կարծիք-  
 ներս: Եթէ օրինակներ բերելու մտքով առ-  
 նենք՝ այն ատեն պիտի ասենք որ Ս. Կեր-  
 սէս բաւական չհամարելով իւր անձի բարի  
 օրինակը յորդորելու ի բարին զհաւատա-  
 ցեալս, օրինակ կը բերէր նաեւ զԱռա-  
 քեալս և զՍ. Ստ. և զԱծեմնիկն, և այլն,  
 այն ատեն կարծեմ կը յարմարի « Էւ տա-  
 րացոյց՝ զԱռաքեալսն յուշ առնելով »:  
 Իսկ եթէ « աղքատաց » սիրտ տալու հա-  
 մար է և յորդորելու զուցէ հարուստնե-  
 րուն՝ յիշելու իրենց աղքատները, այն ա-  
 տեն թերեւս յարմարի « Էւ տառապելոց՝

զԱռաքեալսն յուշ առնելով, որ ի պաշ-  
 տօն աղքատաց ընտրեցին զՍ. Ստ. և զըն-  
 կերս նորա »:

61. Էջ 80. տող 12. Եթէ հաւատաա-  
 ցես ... ինքն յինքնութենէ և իսկ իսկու-  
 թենէ ... — Ուղղ. իսկն յիսկութենէ: Այս-  
 ինքն՝ բնութիւնակից և համագոյակից Հօր:

62. Էջ 81. տող 25. Եթէ դու յուղ-  
 զպիտոս եկեսցես ... — Ուղղ. յարդպիտ-  
 սուրիս:

63. Էջ 82. տող 21. Ինքն եղև. օրի-  
 նակ ... ամենայնի մեռելոց: — Ուղղ. ա-  
 մենայն:

64. Էջ 82. տող 25. Զի մի՛ միայն  
 մարդիկ ... հոգոյն կոյնցոյր: — Ուղղ.  
 նայնցոյր? Փոքր մի ստորեւ ասէ (34 տող)  
 « ամենեքին (ստորակէտն ջնջելու է) հայե-  
 ցեալք սպասեալք »:

65. Էջ 83. տող 7. Զի՛ ի նմա հաճե-  
 ցաւ ամենայն յրարիս յեմկի ... Պարտ է  
 յաւելուլ յրարիսն ստատածութեան:

66. Էջ 83. տող 15. Իսկ յորժամ ի  
 պատարիսն սաւեղոյրիսն գործեցին ... —  
 Ուղղելի՛ գպատարիսագեղոյրիսն գործեցին  
 ... անկան յիշխանութենէ զոր յառաջն  
 ունէին:

67. Էջ 83. տող 22. Իսկ ո՞վ իցէ, որ  
 ոչ ցանգանայ ... և կամ կատարարութեան  
 կարօտիցի ... — Ուղղ. կատարարութեան?  
 « կամ »ը կրկնութիւն է միւս բառի սկիզբն.  
 բայց այդ բառը խորհրդաւոր է, այնպիսի  
 մի յատկութիւն՝ որ « միայն միում Միածնի  
 Որդոյն Աստուծոյ վայելէ »:

68. Էջ 83. տող 36. Ի բազմազգի  
 յարիբ կաշկանդեալք զմտեալ կան ... —  
 Ուղղ. յարիս, մտեալ. ըստ այնմ՝ « Մա-  
 ծեան որպէս կաթն սիրտը նոցա »:

69. Էջ 84. տող 8 ... Էւ կեալ ամե-  
 նայն հանդարտութեամբ ... ի վերայ ազ-  
 րախոր զօրութեանց ... առ մեզ պատա-  
 դիչքն ... որ զնախաձեռն պարն յարագոյցեալ  
 մաճկացուցանե ... ուստի յոյր և ազգի ...

— Ուղղելի ամբաստանի զորութեանց . . . առ մեզ պատերազմի . . . որ զնախնակն վարսն յարցոյցեալ մեղիացոյցուն և զհարպըն գերիկամամբն պատեալ՝ ուստի բիր ազգի . . . — Այստեղ դիտել կու տանք որ բուզանդայ խօսքերը ակնարկութիւն է Պօղոս Առաքելոյ սասաներուն թէ՛՝ Ոչ է մեզ պատերազմն ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ այս չարութեան ընդ իշխանի օղոյս այսորիկ (թուղթ առ կորընթացիս)։ Աստի ջրիստոնեայն հոգւոյն շնորհօք աւելի վեր կը բարձրանայ ըսն երեւելի օղոյս ամբերն, որոց չար ոգին յերկրի ընդ մեզ կը պատերազմի։ Իսկ մնացեալ սրբազրութեանց իմաստն բնազրէն յայտնի է։

70. էջ 84. տող 21. Այլ մեզ այսր լիցի վայել . . . — Ուղղ. վայելի։

71. էջ 84. տող 28. Լի լուսով նորա . . . լսելիս . . . լսելիք . . . ի լսելիս . . . Բառախաղ է՝ թէ ամենայն ինչ լսելիք են, ամենայն ինչ տեսանելիք են յաստուածակոյս կողմանէ, որում յայտնի են ամենայն։

72. էջ 86. տող 34. Ձայս ամենայն բանս, և որ . . . յօրէ յայսմանէ ինչ յաւուրս . . . — Ուղղ. մինչ յաւուրս . . . Պայմանադրութեան կապն է։

73. էջ 90. տող 4. Կաշառակեկս . . . — Ուղղ. կաշառարեկս։

74. էջ 90. տող 28. Այս իբրեւ արտմտեալ . . . առանկիր նիւթեալ . . . — Ուղղ. առանկ հաս վաղէս միւս եպիսկոպոսաց վրայ չարացք է, բայց առանկ եւս ներսիս վրայ, վասն զի համարէր զնա պատճառ իւր որդւոյն մահուան։

75. էջ 91. տող 12. Ռաստմ։ — Ուղղ. Ռոստմ. տես էջ 265։

76. էջ 91. տող 13. Տիսանամ։ — Ուղղ. Տիրապոտ կամ Տրդատ. տես էջ 272, ևս 218, տող 14։

77. էջ 92. տող 33. Այլ պատճառ միայն առնէ զանուն իւր ի վերայ աներեւոյթ մարմնոյն. մահ . . . — Ուղղ. այլ

պատճառ միայն առնէ՝ զանուն իւր ի վերայ աներեւոյթ մարմնոյն պահ, և . . . Այսինքն՝ մահն ջրիստոնէի համար աներեւոյթ փոփոխութիւն է, և Տէրն պատճառ միայն առնէ, որպէս զի իւր անունը աներեւոյթ հող դարձած մարմնոյ վերայ պահէ, որ յետոյ այդ մարմնոյ իսկութիւնը իւր արքայութեան արժանացնէ յարութեամբ։

78. էջ 94. տող 17. Տեսանէր զնա իբրեւ զոր հակառակորդ և թշնամի . . .

— Ուղղ. զիր հակառակորդ և թշնամի. (և կամ թերեւս զայր)։

Հ. Գ. ՆԱԱՊՊԵՏԻԱՍ

Շարունակիլի



ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՐ ԱՌԹԻՒ

Բազմակից. Մայիս 1906. Բ. 5. — «Որ և առ ոյժ կացացի» Փարսեցոյ էջ 171 ընթերցածն՝ առաջարկել էի կարդալ. «Որ և անոյժ կամացի արանց լինէր անցանկ զիբաւ ըստ կամի»։ Յարդէն խմբ. իւր ծանօթութեան մէջ գրեթէ իմ առաջարկութիւնն բնուազրտեալ և Հակասական քննարկ իմաստի հետ. ուստի առաջարկել է նոր ուղղագրութիւն մը՝ այսպէս. «Որ և ստոյգ ըստմի արանց լինէր» . . . Բայց թոյլ տուէք վերստին պնդելու իմ առաջարկած ընթերցումի ուղղութեան վերայ, և ցոյց տալ որ ոչ բնագրտեալ է և ոչ հակասական՝ քննարկ իմաստի հետ, այլ ընդհակառակն։ շարք պարզելու համար՝ խնդրեմ պարբերութիւնը ծայրից սիւեք ընթեմուել. «Էս հասեալք յիւր զետոյն սաստկապէս ըստ ժամանակի իւրոյ պզտորութեանն . . . և աարակոտեալ զօրքն՝ ինկրէին տեղիս անցի, և ոչ զանկէին. և փորձելով ոմանց զբազում տեղիս՝ ընկըրմեալք ի ջուրան, և հազիւ գտեալ անրէն ելս՝ սարէին»։ Մինչեւ ցայս վայր ի զէպ զայ խմբ. ուղղագրութեան. «որ և ստոյգ ըստմի արանց լինէր» անցանկ և «տաբակուածալք զօրքն՝ ինկրէին տեղիս անցի»։ Բազում տեղիք փորձեցին անցնել և չկարացին, և ոմանք հազիւ ազդանք են ինկրէին. ուստի արատուլ՝ պզտոր գետի եզրքը կայնր էին, մինչեւ որ կը հասնի «քաղ զօրք վարն շայց վաճան»։ Անուշտոնախ հարցոյցած կը լինի այդ «ստոյգ և ըստմի» մարդկանց թէ ինչո՞ւ ըստրած կանգնիր են, էլ թէ կտու խմբ. ուղղմայ ծածկել քաղեյու երկրիւք. սակայն նոցա անկեղծաբար իտասովմասք լինելու են իրենց անկարգութիւնը և վասնզի մեծութիւնը. Այն առնն քաղն վաճան, սպանդաբի ինկրով միւս կողմի՝ կը մտնայ գետի եզրքը. «և տեսնուազրեալ զինքն նշանաւ խաչն արջոյ կենսատուի՝ իշանկը ի գետ, և որպէս ընդ յոյժ տեղի ծածմալ՝ անցա